

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 2010 թվականին
SOCIO-ECONOMIC SITUATION
OF THE REPUBLIC OF ARMENIA FOR 2010

• **Ժողովրդագրական իրավիճակը**

ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը 2011թ. հունվարի 1-ի դրությամբ, ընթացիկ հաշվառմամբ, կազմել է 3262.6 հազ. մարդ, այդ թվում քաղաքայինը՝ 2088.5 և գյուղականը՝ 1174.1 հազ. մարդ: 2011թ. տարեկգրի դրությամբ այս ցուցանիշը 2010թ. տարեկգրի նկատմամբ աճել է 13.1 հազ. մարդով, արձանագրելով տարեկան 0.4 %-ի աճ:

2010թ. ՀՀ մշտական բնակչության թվաքանակի աճն ապահովվել է բնակչության բնական հավելածի, որը 2009թ. նկատմամբ աճել է 0.3 %-ով, և միգրացիայի մնացորդի ցուցանիշի 30.1 % նվազման հաշվին:

• **Համախառն ներքին արդյունքի ցուցանիշ (ՀՆԱ)**

ՀՆԱ-ի արտադրության ծավալն, ընթացիկ գներով, 2010թ. կազմել է 3501637.8 մլն.դրամ, իսկ իրական ծավալի ինդեքսը 2009թ. համեմատ կազմել է 102.1%՝ 2009թ. 85.9% նույն ցուցանիշի դիմաց:

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 2010թ.-ին կազմել է 1075409 դրամ (2878 ԱՄՆ դոլար կամ 2168 եվրո):

• **Արդյունաբերություն**

Հանրապետությունում 2010թ., ընթացիկ գներով, թողարկվել է 824430.0 մլն. դրամի, իրացվել 823017.2 մլն. դրամի արդյունաբերական արտադրանք, որից ԱՊՀ երկրներում՝ 61303.3 և այլ երկրներում՝ 227831.9 մլն. դրամի արտադրանք: 2009թ. նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ինդեքսը կազմել է 109.7 %:

• **Գյուղատնտեսություն**

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2010թ., ընթացիկ գներով, կազմել է 636.7 մլրդ. դրամ՝ 2009թ. մակարդակը զիջել է 13.6 %-ով: Անասնաբուծության համախառն արտադրանքը կազմել է 244.0 մլրդ. դրամ՝ պահպանելով նախորդ տարվա մակարդակը, իսկ բուսաբուծությունում՝ 392.7 մլրդ. դրամ և 2009թ. մակարդակը զիջել է 20.3 %-ով:

• **Չկնորսություն, ձկնաբուծություն**

2010թ. իրականացվել է 10238.2 մլն. դրամի ձկան որս, որը կազմել է 2009թ. նույն ժամանակաշրջանի մակարդակի 96.1%-ը (համադրելի գներով):

• **Շինարարություն**

Բնակարանային շինարարություն

2010թ. հանրապետությունում շահագործման է հանձնվել 520270 քառ.մ ընդհանուր մակերեսով 1324 նոր բնակելի շենք կամ 2009թ. նկատմամբ աճել է 19.6 %-ը:

Բրանավանդավոր շինարարության ծավալ

2010թ. հանրապետությունում իրականացվել է 588807.7 մլն. դրամի շինարարություն կամ 2009թ. նկատմամբ նվազել է 2.5%-ով, այդ թվում շինմոնտաժային աշխատանքները կազմել են 504150.7 մլն. դրամ կամ 2009թ. նկատմամբ աճել է 3.3 %-ով:

Հիմնական միջոցների գործարկում

2010թ. գործարկվել են 368767.5 մլն. դրամի հիմնական միջոցներ կամ 2009թ. նկատմամբ նվազել է 3.3 %-ով:

• **Տրանսպորտ**

Բերնավորի տրանսպորտ

2010թ. հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ներհանրապետական բեռնափոխադրումների ծավալը 2009թ. նկատմամբ աճել է 8.3 %-ով:

• **Demographic situation**

By January 1, 2011 the indicator of permanent population in Armenian Republic due to current stocks has made up 3262.6 thousand people, at the same time urban population 2088.5 thousand people and rural ones – 1174.1 thousand people. By January 1, 2011 the indicator of permanent population in RA has increased by 13.1 thousand people in comparison with the beginning of the year 2010, so providing 0.4 % of yearly increase.

In 2010, the permanent population increase appeared to be due to natural growth of population, which in comparison with 2009 increased by 0.3 %, and the decrease by 30.1 % of net migration.

• **Gross Domestic Product Indicator (GDP)**

GDP production volume at current prices comprised 3501637.8 mln. drams for 2010, and growth rate in comparison with 2009 comprised 102.1%, for 2009 85.9 % correspondent indicator.

In 2010 GDP comprised 1075409 drams (2878 dollars or 2168 euros) per capita.

• **Industry**

For 2010 industrial products amounting to 824430.0 mln. drams at current prices were produced in the republic, products amounting to 823017.2 mln drams were realized, in addition in the CIS countries correspondingly 61303.3 mln. drams, and in other countries – 227831.9 mln. drams. Volume index of industrial production in comparison with 2009 comprised 109.7 %.

• **Agriculture**

Gross agricultural output for 2010, at current prices comprised 636.7 bln. drams that exceeded the level of 2009 by 13.6 %. Stock-raising gross output comprised 244.0 bln. drams maintaining the level of the precedent year and plant-growing gross output comprised 392.7 bln. drams exceeding the level of 2009 by 20.3 %:

• **Fish Hunting. Fish-Breed**

For 2010, in the republic was realized fish-hunting amounting 10238.2 mln. drams, that comprised the level of 2009 96.1% (at confronting prices).

• **Construction**

House construction

For 2010, in the republic 1324 new residential buildings with total floor space of 520270 sq. m. were put into operation, compared with 2009 increased by 19.6 %.

Volume of Implemented Construction

For 2010, construction of 588807.7 mln. drams was implemented in the republic, wich compared with 2009 decreased by 2.5 %, and assembly jobs comprised 504150.7 mln. drams, wich compared with 2009 decreased by 3.3%:

Capital Assets Exploitation

For 2010, capital assets of 368767.5 mln. drams were exploited, wich compared with 2009 increased by 3.3%.

• **Transport**

Goods Transportation

In 2010, the volume of intra-republican goods transportation by general use motor transport increased by 8.3 % in the republic in comparison with 2009.

Ուղևորափոխադրումներ

2010թ. հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը 2009թ. ցուցանիշի նկատմամբ աճել է 0.3 %-ով:

Բեռնաշրջանառություն

2010թ. հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ներհանրապետական բեռնաշրջանառության ծավալը 2009թ. նկատմամբ աճել է 32.3 %-ով:

Ուղևորաշրջանառություն

2010թ. հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը 2009թ. նկատմամբ նվազել է 0.1 %-ով:

• **Կապ**

2010թ. կապի ծառայություններից ստացված հասույթը ընթացիկ գներով, կազմել է 165987.1 մլն.դրամ, որը 2009թ. նկատմամբ, համադրելի գներով, աճել է 0.2 %-ով:

• **Առևտուր և այլ ծառայություններ**

Առևտուր

2010թ. առևտրի շրջանառությունը, ընթացիկ գներով, կազմել է 1785.4 մլն. դրամ, որը 2009թ. նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, նվազել է 4.1%-ով, այդ թվում՝ մանրածախ առևտրի շրջանառությունը կազմել է 1165.8մլն. դրամ և 2009թ. նույն ցուցանիշի նկատմամբ աճել 0.6%-ով, մեծածախ առևտրի շրջանառությունը՝ 557.8 մլն.դրամ և նվազել 12.0%-ով, իսկ ավտոմեքենաների առևտուրը՝ 61.8 մլն.դրամ և նվազել 7.9%-ով:

Ծառայություններ

2010թ. ծառայությունների ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 788.8 մլն.դրամ, որը 2009թ. նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 4.3 %-ով:

• **Մպառոդական գներ**

2010թ. դեկտեմբերին 2009թ. դեկտեմբերի նկատմամբ հանրապետության սպառողական շուկայում արձանագրվել է 9.4% գնաճ: 2010թ. սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0.8%՝ 2009թ. նույն ցուցանիշի 0.5% հավելաճի դիմաց:

• **Գրադվաճություն**

Տնտեսապես ակտիվ բնակչության միջին տարեկան թվաքանակը 2010թ. հանրապետությունում կազմել է 1188.1 հազ. մարդ, որոնց 93.0%-ը կամ 1104.8 հազ. մարդ գրադված են եղել տնտեսության մեջ, իսկ 7.0%-ը կամ 83.3 հազ. մարդ չեն ունեցել աշխատանք, գրանցվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ գրադվածության պետական ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ (ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության և/կամ Եվրոստատի կողմից առաջարկված մեթոդաբանության, տնտեսապես ակտիվ բնակչության միջին տարեկան թվաքանակը 2010թ. կազմել է 1463.3 հազ.մարդ, որոնց 81.0%-ը կամ 1185.2 հազ. մարդ գրադված են եղել տնտեսության մեջ, իսկ 19.0%-ը կամ 278.2 հազ. մարդ եղել են գործազուրկ):

• **Արտաքին առևտուր**

ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2010թ., ընթացիկ գներով, կազմել է 1783.8 մլրդ. դրամ կամ 4790.0 մլն. ԱՄՆ դոլար, այդ թվում ապրանքների արտահանումը՝ 387.7 մլրդ. դրամ (ՖՕԲ գնով) կամ 1041.1 մլն. դոլար և ներմուծումը՝ 1396.1մլրդ. դրամ (ՄԻՖ գնով) կամ 3748.9 մլն. դոլար:

Արտաքին առևտրի հաշվեկշիռը բացասական է 1008.4 մլրդ. դրամով (2707.8 մլն. դոլարով):

Passenger Transportation

For 2010 in general use, the volume of passenger transportation by motor transport means increased by 0.3 % compared with the indicator of 2009.

Goods Turnover

In general for 2010, the volume of intra-republican goods turnover by motor transport means in the republic increased by 32.3 % compared with 2009.

Passenger Turnover

For 2010, on the whole, the volume of passenger turnover by means of motor transport decreased by 0.1 % compared with 2009.

• **Communication**

For 2010, the volume of total receipts from communication services rendered comprised 165987.1 mln. drams at current prices, which compared with 2009 increased by 0.2 % at confronting prices.

• **Trade and Other Services**

Retail trade

For 2010, the total volume of trade turnover comprised 1785.4 mln. drams at current prices, which decreased by 4.1% at confronting prices in comparison with the indicator of 2009, in which the total volume of retail trade turnover comprised 1165.8 mln. drams at current prices, which in comparison with the indicator of 2009 increased by 0.6%, wholesale trade turnover comprised 557.8 mln.drams and decreased by 12.0% and motor vehicle trade comprised 61.8 mln.drams and decreased by 7.9%.

Services

For 2010, the volume of the rendered services comprised 788.8 mln. drams at current prices, which increased by 4.3 % at confronting prices compared with the same indicator of 2009.

• **Consumer Prices**

For 2010 December 9.4% of increase was ascertained in consumer market of the republic, compared with 2009 december. In 2010 average monthly growth of consumer prices comprised 0.8% compared with 0.5% growth of the same indicator of 2009.

• **Employment**

Average annual number of economically active population for 2010 was 1188.1 ths. people, of which 1104.8 ths. people or 93.0% were employed, and 7.0% or 83.3 ths. people had no work, so were registered in the "RA Employment Service" Agency under the Ministry of Social Security of RA and got a status of unemployed (According to methodology recommended by International Labour Organization and/or Eurostat, average annual number of economically active population for 2010 was comprised 1463.3 ths. people, of which 81.0% or 1185.2 ths. people were employed and 19.0% or 278.2 ths. people were unemployed).

• **Foreign Trade**

The volume of RA foreign trade turnover comprised 1783.8 bln. drams or 4790.0 mln. dollars at current prices, including export of goods – 387.7 bln. drams (at FOB prices) or 1041 mln. dollars and import of goods – 1396.1bln. drams (at CIF prices) or 3748.9mln. dollars.

The foreign trade balance is negative by 1008.4 bln. drams (2707.8 mln. dollars).